

25

ԱՄԵԱԿ


SILVER JUBILEE



**25th. ANNIVERSARY
1956-1981, TORONTO**

Holy Trinity Armenian Church School





Almagalania

ՄԵՐ ՈՒԽՏԸ

Մենք մեզ ոչ մէկից չենք գերադասում
Բայց մեզ էլ գիտենք, մեզ հայ են ասում,
Եւ ինչո՞ւ պիտի չհպարտանանք,
Կա՛նք
Պիտի լինե՛նք
Ու դեռ շատանա՛նք...

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ ԱԶԳ. ՇԲԹ. ՎԱՐԺԱՐԱՆԻ
ԽՆԱՄԱԿ ԱԼՈՒՓԻՒՆԸ ԻՐ ԽՈՐԱԶԳԱՅ ԵՐԱԽՏԱԳԻ —
ՏՈՒՓԻՒՆՆ ՈՒ ՅԱՐԳԱՆՔԸ ԿԸ ՅԱՅՏՆԷ ԲՈԼՈՐ
ԱՆՈՆՅ, ՈՐՈՆՔ ԻՐԵՆՅ ՆԻՒՓԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅ—
ԱԿԱՆ ԱԶԱԿ ՅՈՒՓԻՒՆԸ Ի ՍՊԱՍ ԴՐԻՆ ԼՈՅՍԻ
ԱՅՍ ՕՃԱԽԻՆ ՅԱՐԱՏԵՒՈՒՓԵԱՆ ԵՒ ԶՕՐԱՅՄԱՆ
Ի ՇԱՀ ՀԱՅ ՆՈՐԱՀԱՍ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՀԱՅԵՅԻ
ԴԱՍՏԻԱՐԱԿ ՈՒՓԵԱՆ:

ԽՆԱՄԱԿ ԱԼՈՒՓԻՒՆ

Telecommunications
ONOP

0AA022
#CAA023 OCT 24 0641 EST
CTC169
OTD955 VIA TELEGLOBE SKA 346 M13/3/35 64
CATO CO SIMX 061
ETCHMIADZIN URSS 51/54 23 1430

ARMENIAN CHURCH
14 WOODLAWN AVENUE WEST TORONTO ONTARIO CANADA

Telecommunications
ONOP

SURP SAHAG MESROB VARJARANI HIMNATRMAN 25-AMIAGI YEROHANIG
ARTIV GEVEGHENK TZEZI DZEKHAGAN KHORHURTIT ANIAMANERUN
POLOR USUTZICHNERUN IEV
ACHA GERDNERUN HAYRABEDAGAN MER ORHNUTIUNE SURP
ETCHMIADZHEN MAGHTELOV LIAGADAR HAGH UGHUTIUM TZER

Telecommunications
ONOP

AYSHA YASHEN ARAKEL UTEAN METCH STOP VAGHCH
LERUKZ ORATZIAL SURP HOKVOV
VASKEN ARACHIAN CATHOLCOS AMENIAN HAYOTZ

COL 14 25-AMIAGI

Telecommunications
ONOP

*Անձնական Գրքի մասին 25-ամյակի կոչումը և այլն
2 հոկտ, Թիֆլիսի իր Կաթոլիկ եկեղեցուց, հայր և մայր զգրված է և
ազատ է հրատարակվելու և Կաթոլիկ Անձնական
Գրքի մասին իր անձնական 2-րդ կողմից անձնական
ժողով: Մյուս կողմից զոհարար Անձնական:
Կաթոլիկ Ա.
Կաթոլիկ ժողովը Հայր*



HIS HOLINESS VASKEN I
Supreme Patriarch and Catholicos of All Armenians



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԽՕՍԲԸ
ԹՈՐՈՆԹՈՅԻ Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ ՀԱՅ ԴՊՐՈՑԻ
25-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ

Հոգեկան գոհունակութեամբ կ'ողջունենք Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ նովանիին ներքեւ գործող Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Հայ Դպրոցի հաստատման 25-ամեակը:

Մեզի համար ուրախութիւն է հաստատել որ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Հայ Դպրոցը 25 տարիներ շարունակ Թորոնթոյի մեր հաւատացեալ ժողովուրդի զաւակներուն ջամբած է հայեցի կրթութիւն՝ անոնց մէջ միշտ վառ պահելով ազգային ինքնագիտակցութեան եւ հպարտութեան ոգին:

Համեստ միջոցներով եւ պայմաններով ու միայն մի քանի աշակերտներու մասնակցութեամբ սկիզբ առած ազգակերտ այս գործը՝ տարիներու հոլովոյթին հետ ուղճացաւ ու զարգացաւ եւ հասաւ այսօրուան օրինակելի դիրքին, 250 աշակերտներու արձանագրութեամբ, շնորհիւ Հոգեւոր Հովիւներու եւ ճխական Խորհուրդներու, Խնամակալութեանց անդամներու եւ ուսուցչական կազմին յանձն առած անսակարկ նուիրումին եւ զոհարութեանց: Անոնք իրենց առաջնահերթ պարտականութիւնը նկատած են, հոգեւոր կրթութեան կողքին, հայեցի դաստիարակութեամբ զօրացնել ու կերտել ապագայի մեր ղեկավարները դառնալու առակ մանուկ հոգիները:

Հայաստանեայց Եկեղեցւոյ շուքին ներքեւ եւ Հայ Դպրոցներու ազգային մթնոլորտին մէջ է որ կը կազմուին եկեղեցասէր, ազգասէր, հայրենասէր, կարգապահ ու հաւատարիմ նկարագրի տէր հայորդիները:

Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Հայ Դպրոցի հաստատման 25-ամեակին առթիւ մեր մաղթանքն է որ Տէրը իր շնորհները անպակաս ընէ Խնամակալութեան անդամներուն, ուսուցչական կազմին, սիրասուն մանուկներուն եւ անոնց ծնողաց վրայէն, եւ Հայ Դպրոցի պատասխանատուներուն պարզեւէ անսպառ եռանդ ու աննահանջ ոգի իրենց սրբազան առաքելութեան ճամբուն մէջ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ

Յունուար 7, 1981

Նիւ Եորք, Ն.Ե.



HIS EMINENCE ARCHBISHOP TORKOM MANOOGIAN
Primate of the Armenian Apostolic Church of North America



*Մեզնի գրքույկի հրատարակութիւնը կարելի եղաւ իրագործել շնորհիւ
Հ. Բ. Մ. Ալեք. Մանուկեան Մշակութային Հիմնադրամի անստատձեան
նուիրատուութեան, որուն համար կը յայտնենք մեր սրտային շնորհա-
կարգութիւնները:*

The publication of this book was made possible by a generous donation from the A. G. B. U. Alex Manoogian Cultural Fund, for which we express our thanks and appreciation.

TO St. SAHAG AND St. MESROB ARMENIAN SATURDAY SCHOOL

Congratulations on the occasion of your twenty-fifth anniversary. The success the Holy Trinity Armenian Church School has experienced over so many years is indicative of the support your community gives to the continuance of Armenian language and culture for your young people.

Some three years ago, the Government of Ontario instituted a policy providing Heritage Programming for the young people of Ontario. By use of government funds, each local Board of Education was given the opportunity of forming Heritage programming within its jurisdiction. Acting on the government's directive the Toronto Board of Education initiated a Heritage Programme. It designed education criteria for programming and instruction and instituted administrative procedures for programme implementation.

One of the basic tenets of the Heritage Programme is that local communities must be instrumental in the formation and on going monitoring. For many language groups this policy provided an opportunity to establish language and cultural programmes for their children. For other groups, such as your own Armenian School, this programme provided an opportunity to use the Toronto Board of Education's educational personnel and expertise and to receive funding to help defray costs.

As Canadians, we should be aware of our ancestral roots. Where close friends and relatives communicate in the language of our forefathers, our children should be given the opportunity to learn this language.

For the past two years, it has been my privilege to have been associated with the Armenian St. Sahag and St. Mesrob School. I applaud your community's effort in preserving your language and developing an awareness in your children of Armenian culture.

The close association that has developed between myself and members of the Armenian community is heartwarming. My best wishes for the continued success of your school and my sincere hope that the spirit of cooperation that now exists will continue.

Yours truly,

*B.S. Garner
Supervising Principal
Heritage Language
Area North
Toronto Board of Education*

Խոհեր
Սուրբ Երրորդութիւն Հայաստանեայց
Եկեղեցւոյ
Սուրբ Սահակ եւ Սուրբ Մեսրոպ
Ազգային Շարաթօրեայ Վարժարանի
25-Ամեակի առթիւ
Թորոնթօ

Ով յարկ վսեմ, տուն սրբանուէր...
Տաճար հրաշագործ, վսեմ ճուլարան,
Ուր կապարն ու ոսկի, Գիւթն հոգի դառնան...
ՌԷԹԷՆՍ ՊԷՐՊԷՐԵԱՆ

Այսպիսի գեղեցիկ տողերով, մանկավարժ գրագէտ Ռէթէոս Պէրպէրեան իր հաւատքն ու սէրը կ'արտայայտէր հանդէպ Հայ Գաղութին, ու կը ջանար իր յաջորդներուն ջամբել նոյն գաղափարականը, որպէսզի անոնք ալ իրենց կարգին պատրաստեն սերունդ մը, որ իր ազգասիրութեամբ եւ հայ մշակոյթի սիրով, մեծնար ու գինովնար այն ակէն՝ որ հայ դպրոցն էր. ջերմանալով ու լեցուելով յագենալու աստիճան, ու շողարձակէր իր ճառագայթները վարակիչ վիճակ մը ստեղծելով չորս դին:

Թորոնթոյի Հայ Գաղութը իր կազմութեան օրերէն եւ մասնաւորաբար 1935-1950-ական թուականներուն, ունեցաւ վերելք մը, ուր հայ մշակոյթը կը պանծար Գանատայի ասպնջական փերուն վրայ, ըլլայ այդ երաժշտութեամբ կամ մշակութային այլ մարզերու մէջ:

Որբերու «խենթ» սերունդ մը կար, որոնք Եգէական գեղածիժաղ փերէն բերուած Օնթարիոյ նահանգի ագարակներու մէջ գետեղուած էին իրենց ֆիզիքական գոյութիւնը պահելու:

Այդ օրերուն մէջ ջերմութիւն մը կար հանդէպ իր ազգակիցին, սիրոյ կապ մը՝ հանդէպ հայ մշակոյթին, որը արծարծուեցաւ ու չչիջեցաւ նոյնիսկ Գանատայի պաղերէն, որովհետեւ այդ ժամանակ կային Փօլ Սվաճեաններ, Ալէքսանեաններ եւ Երուանդ Սէլեաններ, որոնք Ռէթէոս Պէրպէրեանի գծած ուղիով, դէպի հայութիւն կը ջանային առաջնորդել հայ որբուկները: Ու եկաւ ատենը, երբ իրենց հոգիներուն ակօսներուն մէջ դրուած սերմերը պտուղ տուին, ուռճացան, հասունցան ու հրամցուեցաւ այն մատղաշ սերունդին, որոնց ընտանեկան յարկերէն ներս տակաւին կ'ապրէր հայ մամիկն ու տատիկը, ուր նահապետական սովորութիւններ կը յարգուէին, ուր հայ մանուկը միայն հայերէն կը լսէր տունէն ներս: Չէ՞ որ գաղթական հայերու զաւակներ էին եւ ոմանց ծնողաց անգլիերէնը միայն շուկայի մէջ կարելի էր գործածել:

Այդ որբ սերունդէն էին հանգուցեալ Գէորգ Սէմէրճեանը, Յակոբ Սուլինը, Սեդրակ Ատուրեանը, Գրիգոր Գասպարեանը, եւ Մամփրէ Շիրինեանը, որոնց յաճախակի եւ կանոնաւոր այցելութիւններով, հայկական առաջին դասաւանդութիւնները սկսան, քաղաքի մէջ ցրուած հայ տուներէ ներս: Ու նահապետական այդ երդիքներուն տակ սկսաւ լսուիլ մեր Մեսրոպաշունչ լեզուն, հայ երգն ու արտասանութիւնները, ու Սէֆէրեաններու, Փօլատեաններու, Սէլեաններու, Ունճեաններու ու Սուլինի յարկերուն տակ հասակ առնող մանկան սկսան ջամբել մեր մայրենի լեզուն, իրենց, հոգիներուն մէջ դրօշմելով հայկականութեան ոգին, զանոնք դարձնելով տիպար հայ մարդիկ:

Տարիները սահեցան մինչև 1956:

Միջին Արեւելքը սկսած էր քաղաքական անկայուն վիճակ մը ստանալ, եւ շատերու հայեացքները ուղղուած էին դէպի Ամերիկա եւ Գանատա:

Եւ ահա Մարտ 1956-ին սկսաւ առաջին գաղթը Միջին Արեւելքէն դէպի Թորոնթօ: Եկան անոնք հայրով ու մայրով, մեծ հայրով ու մեծ մայրով ու փոքրիկներով, ապահով կեանքի մը հեռանկարով:

Եկեղեցին միակ վայրն էր ուր այն ատեն դարձած էր կեդրոնատեղի հայութեան: Մեծ ընտանիքի մը անդամներուն նման գիրար կը ճանչնային ամէնքը: Նորեկ հայ մանուկներ կային, որոնք տարրական հայերէն մը գիտէին. հարկ էր որ այդ շարունակուէր այս փերուն վրայ ալ:

Օրուայ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Մխական Խորհուրդն ու այցելու Հովիւ՝ Հոգշ. Տ. Վազգէն Արեղայ Դաթոյեան կ'որոշեն Հայերէն լեզուի դասընթացք մը սկսիլ Եկեղեցւոյ սրահին մէջ, հիմը դնելով Ս. Երրորդութիւն Հայ Վարժարանին: Օրուայ Մխական Խորհուրդի Ատենապետն էր Պր. Գրիգոր Գասպարեան:

Եւ հոս նոր էջ մը կը սկսէր բացուիլ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ կրթական մարզին մէջ, նոր քայլ մը առնելով, արդարացնելով «Եկեղեցի եւ Դպրոց» նշանաբանը, այս ասպնջական փերուն վրայ, գոյատեւելու իբրեւ հայ:

Հանգուցեալ Գէորգ Սէմէրճեանի կը վստահուէր այս գործի յաջողութիւնը: Առաջին ժողովէ մը եւ գաղափարի փոխանակութիւններէ ետք, նշանակուեցաւ նորեկ գաղութի անդամներէն՝ Կիպրահայ Պր. Ամբատ Անտրիկեանը եւ Սաղիմահայ Պր. Վարդան Վարդանեանը, իբր ուսուցիչներ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Հայ Վարժարանի:

Վայր՝ Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ վարի սրահը, 14 Վուլյօն Էվլօնի Ուէսթ:

Օր՝ իւրաքանչիւր Հինգշաբթի ժամը 7-9:

Ու ինչ ուրախութիւն եւ եռանդ, արձանագրուած էին եօթը աշակերտ-աշակերտուհիներ, որոնք զաւակներն էին Բաղրամեան - Ֆրանսա, Սարաֆեան - Եգիպտոս, Պէրպէրեան - Իսրայէլ - ամուսններուն:

Սկզբնական շրջանին ոմանց հետերնին բերած դասագրքերը բազմազրելով կը գործածէինք, մինչեւ Պէյրութէն ստացանք գրքերու առաջին տրցակը՝ Լեւոն Շանթի Այբբենարանի՝ շարքը: Յետոյ Հայոց Պատմութեան եւ Հայաստանի Աշխարհագրութեան դասագիրքերու մէկական օրինակ միայն, որմէ ուսուցիչը կը սերտէր, եւ դիւրահաղորդ ձեւով կը ջանար փոխանցել մեր անցեալի փառքը այդ մատղաջ հոգիներուն:

Երթեւեկի դժուարութիւն կար:

Անմիջապէս լուծուած էր հարցը: Հերթով՝ Գասպարեան, Ատուրեան, Սէմէրճեան, էլ մասեան իրենց ինքնաշարժներով կը փոխադրէին մանուկները դպրոց՝ եւ ետ ալ դէպի իրենց տունները:

Մենք իբր ուսուցիչներ հոգեպէս հրճուած էինք: Վերջապէս մեզ ալ առիթ տրուած էր մեր համեստ բաժինը բերելու հայ մանուկին հայեցի դաստիարակութեան:

Փոխան անապատի աւազին՝ Թուղթի վրայ, փոխան կիզիչ արեւին՝ Եկեղեցիի սրահը, եւ փոխան վախի եւ դողի՝ Գանատայի ազատ երկինքը:

1915-ի օրերը շրջուած էին դէպի բարեբաստիկ օրեր:

1957-ին կազմուեցաւ Անգլիախօսներու առաջին դասարանը: Աշակերտները կը բաղկանային ոչ հայերէ, որոնք հայերու հետ ամուսնացած էին: Նոյնպէս Թորոնթօ ծնած եւ մեծցած հայ ծնողաց զաւակներէ:

Ուսուցիչ՝ Պր. Սմբատ Անտրիկեան:

Օրուայ Մխական Խորհուրդի Ատենապետ՝ Պր. Գրիգոր Էլմասեան:

Այս խումբը կանոնաւորաբար կը հետեւէին դասընթացներուն, ու տարի մը Ամավերջի հանդէսին ալ մասնակցեցան:

Հոս տեղին է անէքթոս մը պատմել. -

Օր մը երբ հայերէնի դասի ընթացքին խաղող բառին կը հանդիպին, մեր տեղացի աշակերտները դժուարութիւն կ'ունենան հնչելու այդ բառը: Պր. Անտրիկեան եւ ես որոշեցինք ելք մը գտնել այս անելէն դուրս գալու համար:

Յաջորդ դասին Պր. Անտրիկեանը կարծես բանալին գտած էր: Երբ դասի ընթացքին դարձեալ խաղող բառին կը հասնին, ուսուցիչը՝ հարց կուտայ թէ բնաւ կոկորդնիդ լուացած էք – Կարկըլ –: Եւ այն ատեն բնականաբար պատասխանը «Այո» կ'ըլլայ: Պր. Անտրիկեան կը հարցնէ թէ ի՞նչ տեսակ ձայն կը հանէք երբ կոկորդնիդ կը մաքրէք: Բոլորը կը պատասխանեն «ղը, դը, դը...»: Հանգոյցը քակուած էր...

Թէեւ եռանդը կար, բայց եւ այնպէս երբեմն վիճակներ կը ստեղծուէին ուր կը շուարէինք, եւ կարծես պահ մը անելի մը առաջ կը գտնուէինք:

Երեւակայեցէք, Թուրքիայէն Գանատա գաղթողներէն ոմանց զաւակները իրենց ապրած միջավայրին բերմամբ, հայերէն չէին գիտեր: Սկիզբի շրջանը ասոնց թրքերէնով պէտք էր բացատրուէր դասը: Նոյն վիճակին մէջ էին Սուրիայէն գաղթողներու կարգ մը զաւակները, որոնք նոյն պայմաններու բերմամբ արաբախօս էին, եւ ասոնց ալ Արաբերէն պէտք էր բացատրուէր. Ու կը յուսայինք որ կամաց – կամաց իրենց ականջները լեցուէին հայ լեզուի ձայներով ու սկսէին բարբառել Մայրենի Լեզուն:

Ամէն տարի Ամանորին՝ կաղանդ պապուկը իր նուէրները կը բաշխէր ոչ միայն աշակերտութեան, այլ ներկայ եղող ծնողաց: Ամավերջի հանդէսին տեղի կ'ունենար նաեւ հանգանակութիւն՝ դպրոցի ծախսերը հոգալու:

Մեր նշանաբանն էր ճշդապահութիւն եւ դպրոցի բոլոր ձեռնարկներն ալ կը սկսէին ճիշդ ատենին:

Ամավերջի հանդէսը պատճառ կը դառնար որ հայ մանուկներու երգերն ու պարերը յուզէին ներկաները, ու անհաւատալի բայց իրաւ, այդ վիճակէն լիացա՝ նրադառնալու իրենց տունները:

Այցելու Հովիւ՝ Հոգշ. Տ. Վազգէն Աբեղայ Դաթոյեան, որ Ամերիկածին էր, իր օրհնութիւնը չէր գլանար Հայ Դպրոցին եւ աշակերտութեան: Ատեններ եղած է որ ինքն ալ իր ներկայութեամբ զօրավիզ կանգնած է Հայ Վարժարանին, գիտակցելով թէ այս նոր իրադարձութիւն մը ըլլալով հանդերձ Թորոնթոյի Հայ կեանքէն ներս, վերջ ի վերջոյ առաքելութիւն մը պիտի ունենար, օրըստօրէ նոր հայ գաղթականներով աւելցող այս գաղութի մանուկներուն Հայերէն լեզուն ու ոգին փոխանցելու աշխատանքը իրականացնելով:

Հայ կեանքը կը խայտար ու բոլոր նորեկները անխտիր, Աւետարանական ու Կաթողիկէ եւ ուրիշներ տարբեր քաղաքական հակումներով, բոլորուած էին եկեղեցիին եւ դպրոցին շուրջ, նոր աւիշ տալով եւ օգտակար դառնալով, իւրաքանչիւրը իր կարողութեան սահմանին համեմատ, ըլլայ այդ նիւթապէս եւ կամ բարոյապէս: Մէկ կէտ յստակ էր բոլորին մտքին մէջ Համայնքի Համերաշխ Կեանք – եւ այդ ուղին եւ աշխատանքը, այդ ուղղութեամբ երկար ատեն պահուեցաւ:

Դպրոցն ու Եկեղեցին կարեւոր օղակներն էին այդ շղթային, որոնց կուգային միանալ, Եգիպտահայը, Իրաքահայը, Պոլսահայը, Լիբանանահայը, Սուրիահայը, Պաղեստինահայը, Ֆրանսահայը, Եուկոսլավահայը, Կիպրահայը, եւ վերջապէս Պարսկահայն ու Ռումանահայը, ամրակուռ կերպով, մէկ յայտարարի տակ ի սպաս դնելով իրենց կարողութիւնները՝ ի պայծառութիւն Եկեղեցիիս եւ Հայ Ազգի գոյութեան:

Ու հիմա երբ յետադարձ ակնարկ մը կը նետենք 25 տարիներու շրջանին, մեր երեւակայութեան պաստառին վրայէն կարծես կը տողանցեն բոլոր այն ազնիւ հոգիները, որոնք իրենց լաւագոյնը տուին այս գաղութի բարօրութեան, եւ ապա մեկնեցան այս աշխարհէն:

Խունկ ու աղօթք անոնց յիշատակին:

Այժմ՝ կը տեսնենք ուռճացումը, կենսունակութիւնը այս գաղութին, կը տեսնենք այն յամառ աշխատանքը զոր կը տարուի նոր սերունդի դաստիարակութեան գործին մէջ, ի հեճուկս՝ բոլոր անոնց, որոնք կ'ըսէին ու շատեր տակաւին կ'ըսեն թէ Հայութիւնը այս փերերուն վրայ ձուլման ճամբան բռներ է եւ միայն տասը տարուայ կեանք ունի:

25 տարիներ առաջ ալ այդպէս ըսողներ կային:

Հայորդիներ, տեսէ՛ք ձեր շուրջը ու հպարտացէ՛ք թէ մեր մշակոյթի անդաստանը որքան առողջ ու զարդարուն է:

Մէկ Շաբաթօրեայ Վարժարան, մէկ Ամառնային Վարժարան եւ երկու Ամէնօրեայ Վարժարաններու գոյութիւնը, իւրաքանչիւր Հայու հոգին պէտք է հրճուեցնէ, որովհետեւ «Հրաշագործ» այդ «Տաճարներու» կամարներուն տակ, որոնց Հայ Դպրոց անունը կուտանք եւ հոն ուր հայ մանուկներու հոգիները կը դարձնուին եւ հում նիւթէն կը ջանան կերտել վաղուայ առողջ եւ հպարտ Հայ Սերունդը:

Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Ազգային Շրթ. Վարժարանի 25-ամեակին առթիւ, մեր այս համեստ սողերը թող յիշեցնեն բոլորին, բոլորին անխտիր, թէ այս հիմերը զոր մենք նետած էինք 1956-ին, որ գոյատեւած է 25 երկար տարիներ, զօրաւոր է, աւելի պիտի ուժեղանայ, այնքան ատեն որ մենք զգաստ կը մնանք եւ կը հաւատանք թէ անփոխարինելի մարդ չկայ, թէ գալիք սերունդները աւելի լաւ պայմաններով կրնան դաստիարակուիլ, եւ պէտք է որ մենք հետաքրքրուինք մեր նոր հայ սերունդի հայեցի կրթութեամբ, շարունակելով այս Սուրբ Գործը:

Մնանք անխախտ մեր հաւատքին մէջ, ունենանք կամք, ունենանք յարգանք իրարու հանդէպ, սէր մեր մատղաշ սերունդին եւ Հայ Մշակոյթին՝ զանոնք դարձնելու վաղուայ հպարտ Հայ Գանատացի քաղաքացիներ, քալելով ճակատաբաց՝ նուաճելու նոր հորիզոններ հպարտ իր Հայութեամբ, Ազգութեամբ, կրօնքով եւ Մշակոյթով:

Ի Դիմաց Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Ազգ. Շրթ. Վարժարանի
Առաջին Ուսուցիչներու

Սմբատ Անտրիկեան եւ Վարդան Վարդանեան

Յ.Գ. Եթէ որեւէ անուններ մոռցուած են, այդ չէ եղած դիտումնաւոր կերպով: 25 տարիներ հտ երթալ եւ մանրամասնութիւններ յիշելը դժուար է: Ներողամիտ եղէ՛ք:

Dear Friends:

As a reader of this booklet, you may hardly need an introduction to our dear St. Sahag and St. Mesrob Armenian Saturday School. Suffice it to say that it is unique in its kind in the Armenian Community of Toronto.

The year 1981 is the 25th birthday of our school. That is why the Board of Trustees have planned today's celebrations and will continue to put great emphasis throughout the year by planning many other activities, commemorating the Silver Jubilee.

The Board of Trustees strongly believes that children are our most precious resource, and education is a serious business. This is why every Saturday morning we gather those 250 students to teach them the language, but learning the language is just the first step in acquiring the comprehensive understanding of the Armenian history and culture. The programs of instruction are geared to make students appreciate his or her ethnic background and cultural heritage. Our aim is to give something to the country we live in, that is Canada.

We try to capture the feelings of the students through our curriculum, activities and dramas. This merging of forces, the school, parents, students and the governing body will be, we believe a positive step toward building good citizenship for tomorrow. In this very case however, building for tomorrow is strengthened by inducing the students to look back at their ethnic roots and historical traditions.

After these introductory remarks, you will undoubtedly want to know just what you can do to help. May I make the following suggestions? First, help and support your school, and cooperate with the governing body in pursuing its cause. Second, use the school as a tool for the advancement of the Armenian people, now and in the future.

In closing, I like to extend on behalf of myself and my colleagues our humble tribute and good wishes to you all and pray for continued peace, happiness and prosperity.

*JOSEPH SHANLIAN
CHAIRMAN
BOARD OF TRUSTEES*

ԽՆամակալութեան Խօսքը

25 տարիներ առաջ, հեռատես ու լուսամիտ խումբ մը նուիրեալ հայեր, իրենց պապենական հողերէն դուրս, մեծ համոզումով հիմը կը դնեն Թորոնթոյի Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Ազգային Շարաթօրեայ Վարժարանին:

Այդ օրերուն հակառակ բազում խոչընդոտներու, շնորհիւ զոհողութիւններու կարելի կ'ըլլար յաղթահարել դժուարութիւնները: Ու ահա մինչեւ թուականս անոնց յաջորդող անխոնջ ու զոհաբերող խնամակալ Մարմիններու, Տնօրէններու եւ նուիրեալ Կրթական Մշակներու առաջնորդութեամբ, մեր հաստատութիւնը կը շարունակէր անոնց սկսած գործը, հասցնելով զայն այսօրուան բարօք վիճակին:

Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Ազգ. Շրթ. Վարժարանս կտրած է 25 երկար տարիներու ճանապարհ մը, որ անհատի մը կեանքը հասունութեան կը հասցնէ, սակայն հաստատութիւններու կեանքին մէջ, սկզբնաւորութեան առաջին հանգրուանն է:

Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Ազգ. Շրթ. Վարժարանս երիտասարդ է աւելի քան երբեք, եւ վճռակամ աշակերտին մէջ կերտելու իր ազգին պատկանելիութեան գիտակցութիւնը, պատնէշ կանգնելով լամէն վտանգի դէմ:

Եւ ահա ազգային, տոհմիկ եւ ընտանեկան բարքերու ապականացման այս օրերուն, անհրաժեշտ է որ մէն մի թորոնթոհայ ընտանիք, թիկունք կանգնի Վարժարանիս յառաջացման ու վերելքին, սատարելով անոր, նիւթապէս եւ բարոյապէս, աւելիով արդիւնաւորելու Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Ազգ. Շրթ. Վարժարանիս վստահուած նորահաս սերունդի հայեցի դաստիարակութիւնը:

Ճօզէֆ Շանլեան
Խնամակալութեան Ատենապետ

ԳՆԱՀԱՏԱԳԻՐ

1969-ի Աշնան, երբ Թորոնթո հաստատուեցայ, յաջորդող երկու օրերուն տեղեկացայ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Ազգ. Շրթ. Վարժարանին մասին, ուրկէ ծնունդ առաւ ազգային ծառայութեանս այս հանգրուանը Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդին եւ անոր յարակից Կազմակերպութիւններու վարչութիւններուն մէջ շարունակաբար մինչեւ այսօր:

Փառք անոնց, որոնք 25 տարիներ առաջ տեսիլքը ունեցած են հաստատելու անդրանիկ օճախը եւ բոլոր անոնց որոնք մինչեւ օրս իրենց սիրայօժար մասնակցութիւնը բերած են եւ կը բերեն Հայ մանուկին եւ պատանիին ջամբելու իր մայրենի լեզուն, պատմութիւնը եւ մշակոյթը:

Քսան եւ հինգ տարիներու ընթացքին լոյսի այս փարոսին շնորհիւ, Հայ լեզուի պատմութեան եւ մշակոյթի կողմէն, ամէն մի թորոնթոհայու տուն, մտած է քիչ մը աւելի ազգային հպարտութիւն՝ ըլլալու ՀԱՅ, քիչ մը զգացում՝ ապրելու որպէս ՀԱՅ:

Հպարտ եմ եւ գոհունակ որ այսօր հանգամանօրէն որպէս Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի Կցորդ, առիթը տրուեցաւ այս տողերով հրապարակաւ արտայայտելու իմ երախտագիտութեան զգացումները Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Ազգ. Շրթ. Վարժարանի ներկայ Ուսուցչական Կազմին, Տնօրէնութեան եւ Խնամակալութեան կազմին:

Հիւրընկալ Գանատայի եւ Օնթարիոյ Նահանգի կառավարութիւնները ստեղծած են պայմաններ եւ միջոցներ մեր ազգային անհատականութիւնը պահելու: Յոյսով եմ որ թորոնթոհայութիւնը ապագային եւս պիտի գիտնայ պահել եւ օժանդակել քաղաքիս առաջին հայ կրթական հաստատութեան, որպէսզի սերունդներ եւս հաղորդուին մեր սուրբ բարբառով, իրենց մատղաշ հոգիները լեցուն Հայկականութեամբ եւ կենցաղը ըլլայ հայկական:

Թող Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Ազգ. Շրթ. Վարժարանի անունը ըլլայ փառք եւ պատիւ իր հիմնադիրներուն, անոր ծառայող ուսուցիչներուն, ու զայն ծաղկեալ պահող Թորոնթոհայութեան:

ՀՐԱԶ ՇԻՇՄԱՆԵԱՆ՝

Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի Կցորդ

APPRECIATION

It is with a tremendous sense of joy that we join you in celebrating the 25th anniversary of Saint Sahag and Saint Mesrob Armenian School of Toronto.

Twenty-five years ago Holy Trinity Armenian Church of Toronto, concerned with initiating and fostering a haven for the Armenian Heritage and the Armenian Spirit, opened the doors of the first Armenian learning institution in Toronto. Since that time hundreds of Armenian boys and girls have graduated from our school proudly conversant with the Armenian Language and Culture. Many of them have now become parents and are gladly watching their own children speak and write our magnificent and unique language.

This is the proper occasion also to acknowledge the dedication and selfless devotion of the scores of men and women who in their capacity as teachers, principals and trustees of the school, helped enrich and brighten the lives of our children. their service has been most noble and gratifying over the past quarter century.

It is our true wish that the graduates of Saint Sahag and Saint Mesrob School may continue in their quest for truth, beauty and love on the path toward greater knowledge and wisdom.

Happy 25th anniversary to our School.

SARKIS TCHILINGIRIAN
CHAIRMAN
PARISH COUNCIL HOLY TRINITY ARMENIAN CHURCH

Մեր Վարժարանը

25 տարիներ առաջ, 1956 թուի Հոկտեմբերին, մի քանի հայասեր, գիտակից եւ հեռատես ազգայիններ, իմաստութիւնն ունեցան Ս. Երրորդութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ սատարած հոգեւոր սնունդին հետ միասին, հայ մանուկին մատչելի դարձնել իր մայրենի լեզուի գիրն ու գրականութիւնը: Որոշումը գործ դարձած, անսահման զոհողութիւններով հիմքը դրուեց մեր այսօրուայ շաբաթօրեայ վարժարանին: Մի քանի աշակերտներով տուներու մէջ սկսուած դասաւանդութիւնը, զանազան դժուարին փուլերէ անցնելէ յետոյ, այսօր վերածուած է կրթութեան դարբնոցի մը, որ իր հիմքերու վրայ ամուր կանգնած, մեր Եկեղեցւոյ հետ միասին, կը հանդիսանայ գաղութիս կորիզը եւ կը վայելէ անոր սէրն ու գուրգուրանքը:

Ո՞ր հայի սիրտը ուրախութեամբ եւ հպարտութեամբ չի լեցուիր ի տես մի տասնեակ օթօպիւսաների եւ բազմաթիւ անձնական ինքնաշարժների, որոնք վարժարանս կը բերեն 250 հայ մանուկներ:

Ո՞ր Հայի աչքերը ուրախութեան արցունքներով չեն թրջուիր, երբ առաւօտեան աղօթքից յետոյ այդ 250 աշակերտները 16 ուսուցիչ-ուսուցչուհիների եւ 5 օգնականների հետ միասին ամբողջ սրտով կ'արտասանեն եւ կ'անմահացնեն Պարոյր Սեւակի

«Մեմֆ մեզ ոչ մէկից չեմք գերադասում,
Բայց մեզ էլ գիտեմք, մեզ հայ են ասում.
Եւ ինչու պիտի չհպարտանանք,
Կանգ, պիտի լինեմք ու դեռ շատանանք...»:

Մանկական շրթունքներով արտասանուած այս ոսկետառ բառերը կենդանի վկաներն են այն իրողութեան, որ օտարութեան բիրտ ալիքների դէմ անխորտակելի պարիսպ է կառուցում Մեր Վարժարանը:

Իր գոյութեան 25 տարիների ընթացքին Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Ազգ. Շաբաթօրեայ Վարժարանը իր տարած արդիւնաւէտ աշխատանքով Գանատահայութեան մօտ ունեցել է իր իւրայատուկ տեղը եւ այսօր շնորհիւ կարող եւ առողջ ուսուցչական կազմի, ուսման իր մակարդակը հասցրել վայել բարձրութեան: Մեր նպատակակէտը միշտ եղել է Հայ մանուկին սորվեցնել Հայոց Լեզուն, Ազգ. Պատմութիւնը, Հայ երգը եւ կրօնքը: Աշխատել ենք նրան գիտակ դարձնել իր ծագումին, ծանօթացնել Ազգային Մշակոյթին եւ ջերմացնել նրա հոգին հայութեան սիրով: Պահելով մեր ուղեգիծը, ուսումնական ծրագիրը յարմարացրել ենք ժամանակի պահանջներին: Ուսուցիչների հսկողութեան տակ, մեր աշակերտները դիտել են Հայ եւ օտար ներկայացումներ եւ ժապաւէտներ, ունկնդրել են գաղութից հրաւիրուած Հայ մասնագէտների եւ այցելել Տիթրոյթի Ալեք Մանուկեան Ամէնօրեայ Հայ Դպրոցը: Ազգային տօները միշտ նշուել են պատշաճ ձեւով, աշակերտների կողմից պատրաստուած հանդէսներով:

Վարժարանս յաճախ է հիւրընկալել ակնառու անձնաւորութիւններ, որոնք գովասանքով են արտայայտուել կարգապահութեան, կազմակերպութեան եւ առօրեայի մասին:

Կասկած չկայ որ շաբաթը քանի մը ժամ Հայոց Լեզու դասաւանդելով հայագէտ շրջանաւարտներ չենք կարող ունենալ, ոչ էլ կ'ակնկալենք, բայց համոզուած ենք, որ եթէ ոչ հայագէտ՝ գէթ հայասէր դարձած կը մեկնին Վարժարանէն:

Այժմ Վարժարանս ունի Մանկապարտէզի եւ Նախակրթարանի 8 դասարան: Նոյն բաժնի մէջ կազմուած է յատուկ մի դասարան, որտեղ ոչ հայախօս աշակերտներուն Հայոց Լեզուն կը դասաւանդուի մասնաւոր եւ անհատականացուած ծրագրով:

Վերոյիշեալ տուեալներէց ելնելով, կարելի է ասել որ Վարժարանս հասել է շօշափելի յաջողութեան:

Այս յաջողութիւնը կը պարտինք նախ մեր աշակերտութեան, որ տարուէ տարի աւելի եւ աւելի է հասկանում եւ արժէքաւորում ազգային իւրայատկութիւնները: Այն ծնողներին որոնք տակաւին բժախնդրօրէն փարած իրենց ժառանգականութեան, կ'ուզեն օրինակ հանդիսանալ իրենց զաւակներին: Սուրբ Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ Միական Սորհուրդին, որուն հովանաւորութիւնը կը վայելէ Վարժարանս, եւ ի վերջոյ Խնամակալութեան, Տնօրէնութեան եւ Մանկավարժական կազմին, որոնք միասնաբար անձնուրացօրէն կ'աշխատին եւ կարելին կ'ընեն արդարացնելու համար իրենց վրայ դրուած յոյսերը:

Նախկին շրջանաւարտները, ներկայ աշակերտութիւնը եւ մենք բոլորս գլուխ կը խոնարհենք դպրոցի հիմնադիրների յիշատակին, որոնցմէ շատեր այլեւս չկան, եւ շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր անոնց որոնք Վարժարանս հիմնելու ազնիւ գաղափարը յղացան եւ տարիների ընթացքին օգնեցին եւ սատար հանդիսացան որ Վարժարանս հասնի այսօրուայ դիրքին:

Ահա իր արդիւնաւէտ գոյութեան 25-րդ տարուայ սեմին, Տնօրէնութեան եւ Մանկավարժական կազմին անունից կը շնորհաւորեմ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Շարաթօրեայ Ազգային Վարժարանը, սրտանց ցանկանալով որ ոչ միայն պահի իր բարձրութիւնը, այլեւ նորանոր նուաճումներով փառաբանուի իր անունը:

ԱՐՇԱԼՈՅ ՔԱՆՏԱՀԱՐԵԱՆ
Տնօրէնուի



Զօն Մեր Վարժարանին

Ողջոյն դպրոց մեր պատուական,
Դու մեր յոյսը ազգապահպանման,
Քեզնով եմք մեմք հպարտանում,
Կարդում, երգում եւ հայ մնում:

Դու օճախը մեր մայր լեզուին,
Հուր եւ տալիս մեր սրտերին,
Որ մեմք մնանք հաւատարիմ,
Սուրբ ուխտին մեր նախնիներին:

Մեսրոպաշունչ մեր բարբառով,
Խօսք եմք տալիս ամբողջ սրտով,
Լինել ժառանգորդն արժանի,
Որ մեր ազգն երբեք չկորչի:

Եւ դու մնաս միշտ անսասան,
Որպէս փարոս մեր հայութեան,
Եւ դէպի քեզ առաջնորդես,
Հայ մանուկները ժրջան:

Որ նրանք էլ իրենց հերթին,
Լոյս սփռեն աշխարհի չորս դին,
Համայն աշխարհ թող իմանայ,
Որ Հայութեան էլ մահ չկայ:


ԱՐՇԱԼՈՅՍ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ




Երեւոյն Կոմիտասի Գեղարվեստի
 Գործարանի Գործեր



ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ԲԱԺԻՆ Բողբոջ, Կոկոն, Ծաղիկ Դասարաններ Իրենց Ուսուցիչներով Եւ Օգնականներով







Ե-Ը Դասարաններ իրենց Ուսուցիչներով



Նախակրթարանի Ա-Դ Դասարաններ իրենց Ուսուցիչներով և Օգնականներով



ԱԿՆԱԿ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՅԼԵՐԳ

TEMPO DI MARCIA

Handwritten musical score for a march. It consists of six staves of music. The first staff begins with a treble clef, a key signature of one flat (B-flat), and a 2/4 time signature. The music is written in a single melodic line. The first staff starts with a dynamic marking 'f' (forte). The score includes various rhythmic patterns, including eighth and sixteenth notes, and rests. There are some triplets indicated by a '3' over a group of notes. The piece concludes with a double bar line.

ԱԿՆԱԿ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՅԼԵՐԳ

Միշտ սովորենք, Միշտ աղիապենք
 Գերազանցիկ լինենք ուսման
 լաւը սիրենք, վաղը ապենք
 Ջիւնուոր դառնանք ճշմարտութեան:

Մենք զաւակներ մայր բնութեան
 Մենք պատանի աղակերպներ
 Ռպրոպն է մեր երջանկութեան
 Ուղիւն քանու՛մ Միշտ դէպի վեր:

Ջարկիր թմբուկ, հնչիր ջնփոր
 Դնանք դէպի լեռներն ի վեր
 Ասեակ Մեսրոպեան կամֆով հլօր
 Միշտ անասան, միշտ անվեհեր:

Ջարկիր թմբուկ, հնչիր ջնփոր
 Դնանք դէպի լեռներն ի վեր
 Ասեակ Մեսրոպեան կամֆով հլօր
 Միշտ անասան, միշտ անվեհեր:

Առաջին Այցելութիւնս Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Շարաթօրեայ Ազգային Վարժարանը

Մանուկներ անմեղ հոգւոյս սիրական,
Դուք տուիք ինձի եռանդ տեւական,
Դուք զիս սիրեցիք ես ալ փոխադարձ,
Յիշատակ մնաց անցեալը անդարձ:

Նոյեմբեր 1965 թուականին ընտանեօք Գանատայի հողին վրայ էինք: Առաջին
Կիրակին եկեղեցի գացի: Հայր Սուրբը առաջարկեց որ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Շրթ-
Ազգ. Վարժարանը այցելենք: Սիրով ընդունեցի: Կարծես հոն երթալով ետիս ձգած
աշակերտներու կարօտը պիտի առնէի, որոնցմէ քսան օրերէ ի վեր բաժնուած էի:

Այցելեցինք Վարժարանը: Անբացատրելի էր կրած հոգեկան ուրախութիւնս եւ
գոհունակութիւնս ի տես օտար հողին վրայ կազմուած հայ վարժարանին: Հոգ չէ թէ ան
չաբաթը մէկ օր էր: Դասարանները կանոնաւոր դասաւորուած՝ շատ կարգապահութեամբ
աշակերտները մտիկ կ'ընէին ուսուցիչին: Լաւ տպաւորութեամբ մեկնեցայ վարժարանէն:

Մի քանի օր յետոյ Միսականը հրաւիրեց որ ես ալ իմ մասնակցութիւնս բերեմ
մանկապարտէզի բաժնին մէջ: Նախ 33 տարուայ աշխատանքս ըսաւ «Յոգնած ես, մի
աշխատիր»: Սակայն մանուկներու հանդէպ տածած սէրս եւ ազգիս քիչ մը եւս օգտակար
ըլլալու փափաքս համոզեց զիս: Հինգ տարի պաշտօնավարեցի եւ յանձնեցի աւելի
երիտասարդ ոյժերու: Գնահատելի էին ծնողներուն քաջալերանքը վարժարանին հանդէպ,
նաեւ ուսուցիչներուն ժրջան ջանքերը որոնք շատ մեծ դեր ունին ազգապահպանման
համար: Աստուած օրհնէ բոլորն ալ:

Ներկայիս որ 25 տարեկան եղած է Շարաթօրեայ Վարժարանը, կը շնորհաւորեմ եւ կը
մաղթեմ որ յարատեւէ տալու աշակերտին հայ մնալու գիտակցութիւնը:

Աղանի Գարակէօզեան
Մանկապարտիզպանուհի

Ս. Սահակ – Ս. Մեսրոպ Ազգային Շարափորեայ Վարժարան

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍՈՒՐԷՆ ԱՃԵՄԵԱՆ
ՊԷՆԻ ԱՄԲԱԿՈՒՄԵԱՆ
ԷՏՄՈՆ ԱՐԹԻՆ
ՄԱՍԻՍ ԱՖԱՐԵԱՆ
ՅԱՍՄԻԿ ԱՖԱՐԵԱՆ
ԱՆԴՐԷԱՍ ԳԱԼԱՅՅԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԺԱԳ ԳԱԼՓԱՔԵԱՆ
ՀՐԱՅՐ ԳԱՖԷՍԵԱՆ
ԱՐՇԱՄ ԳԸԼԸՃԵԱՆ
ԳԷՈՐԳ ԳՈԼՈԼԵԱՆ
ԼԵՒՈՆ ԵԱԶԸՃԵԱՆ
ԱՐՓԻ ԵԱԶԸՃԵԱՆ
ԲԻԻԶԱՆԴ ԵԱԼՆԸԶԵԱՆ
ԹՈՐԳՈՄ ԶԱՊՈՒՆԵԱՆ
ԱՆԻ ԷՕՏԷՄԻՇԼԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ԹՈՋԱՔ
ՅԱԿՈՒԹ թՈՍՈՒՆԵԱՆ
ՆՈՒՊԱՐ ԹՈՍՈՒՆԵԱՆ
ԿԱՐՕ ԽԱՊԱՅԵԱՆ
ԱՐՄԱՆ ԿԻԻԼԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ԿԻԻԼԵԱՆ
ՅԱԿՈՒ ՀԱՄԲԱՐԵԱՆ
ՅԱՐՈՒԹԻԻՆ ՀԱՑՈՒՆԻ
ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐԵԱՆ
ՏՈՔԹ. ՆՈՐԱՅՐ ՃԷՅԼԱՆԼԻ
ԱՆԱՀԻՏ ՄԱԹՈՍԵԱՆ
ՕՆՆԻԿ ՄԱՐՏԻԿԵԱՆ
ՆՇԱՆ ՄԱՆՃԻԼԻՔԵԱՆ
ՍԻԻԶԱՆ ՄԱՆԿՈՅԵԱՆ
ԱՏՐՈՒՇԱՆ ՄՈՒՇԼՈՒԵԱՆ
ԱՐԹԻ ՅԱԿՈՒԹԵԱՆ
ԹԱԳԻՈՐ ՅՈՐԲԵԱՆ
ՅԱԿՈՒ ՆԱՌ
ԶԱՐԵՀ ՆԵՐՃԻՎԱՆԵԱՆ
ՄՈՒՇԵՂ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ
ՃՈՋԷՖ ՇԱՆԼԵԱՆ
ՀՐԱԶ ՇԻՇՄԱՆԵԱՆ
ԼԵՒՈՆ ԶԷՕՄԼԷՔՅԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
ՍԻՊԻԼ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ
ԵԴՈՒԱՐԴ ՊԱՐՈՆԻԿԵԱՆ
ԱԼԷՔՍԱՆ ՊԱԼԹԱՅԵԱՆ
ՏԻԳՐԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ
ՃՈՐՃ ՊԷՅԼԷՐԵԱՆ
ԵԴՈՒԱՐԴ ՍԱՐԱՖԵԱՆ
ՀԱՅԿ ՍԵԼԵԱՆ
ՊԵՏՐՈՍ ՍԵՄԵՐՃԵԱՆ
ՍՏԵՓԱՆ ՍԵՄԵՐՃԵԱՆ
ՎԱՀՐԱՄ ՍԵՄԵՐՃԵԱՆ
ՎԱՀՐԱՄ ՍԻՄՈՆԵԱՆ
ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ
ՄԱՐՏԻԿ ՓԱՓԱԶԵԱՆ
ՍԵԴԱ ՓԱՓԱԶԵԱՆ
ԼԻԼԻ ՔԵՐԻՄ

ՏՆՕՐԷՆՆԵՐՈՒ ԾԱՆԿ

ՊՐՆ. ԳԷՈՐԳ ՍԵՄԵՐՃԵԱՆ
ՊՐՆ. ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ
ՊՐՆ. ՊԵՐՃ ԼԻԻԼԷՃԵԱՆ
ՊՐՆ. ՅԱԿՈՒ ՊԱԼԵԱՆ
ՏԻԿ». ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ԱՐԹԻՆԵԱՆ
ՊՐՆ. ՊԵՏՐՈՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
ՊՐՆ. ԿԱՐՕ ԽԱՊԱՅԵԱՆ
ՊՐՆ. ԵԴՈՒԱՐԴ ՊԱՐՈՆԻԿԵԱՆ
ՊՐՆ. ԱՆԴՐԷԱՍ ԳԱԼԱՅՅԵԱՆ
ՊՐՆ. ՆՈՒՐՀԱՆ ՔԱՐԱՆ
ՏԻԿ. ԱՐՇԱԼՈՅՍ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ

ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ ԿԱԶՄ

ՍԻԼՎԱ ԱՂԱՊԷԿԵԱՆ
ՇԱՔԷ ԱՄԲԱԿՈՒՄԵԱՆ
ԱՆԻ ԱՊՏԱԼԵԱՆ
ՍՈՆԱ ԱՊՏԱԼԵԱՆ
ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐԹԻՆԵԱՆ
ՇԱՔԷ ԱՐԹԻՆԵԱՆ
ՎԵՐԺԻՆ ԳԱՐԻԷԼԵԱՆ
ԱՐՐԱՀԱՄ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ
ԱՐԱՔՍԻ ԳԱՍԱՐՃԵԱՆ
ՍՈՆԻԱ ԳԱՐԱՃԵԱՆ
ՄԱՐՕ ԳԱՆԻԷԼԵԱՆ
ԱՐՓԻ ԵԱԶԸՃԵԱՆ

Մանկապարտիզպանուհի

ՏԻԿ. ԱՂԱԻՆԻ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ Մանկապարտիզպանուհի

ՊՕՂՈՍ ԵԱԶԸՃԵԱՆ
ԱԼԻՍ ԵՐԿԱՆԵԱՆ
ԶԱՐՄԻՆԷ ԶԱՊՈՒՆԵԱՆ
ԱՆԻ ԷՕՏԷՄԻՇԼԵԱՆ
ՀԱՊԻՊ ԹՈՐՈՍԵԱՆ
ՆՈՒԱՐԴ ԹՈՒՄԱՅԵԱՆ
ԺԻՐԱՅՐ ԹԻԻԹԻԻՃԵԱՆ
ՍՈՖԻ ԹՈՎՄԱՍԵԱՆ
ԶԱՐՈՒՀԻ ԺԱՄԿՈԶԵԱՆ
ՄԷՅՐԻ ԺԱՄԿՈԶԵԱՆ
ԶԱՐՈՒԿ ԻՇՈԱՆԵԱՆ
ՄԱՔՐՈՒՀԻ ԿԱՐԱԳԵԱՆ
ԱՆԺԷԼ ՀԱՑՈՒՆԻ
ԷԼԻԶ ՀԱՍՐՃԵԱՆ
ՎԵՐԺԻՆ ՀԷՔԻՄԵԱՆ
ՍԻԻԶԱՆ ՂՈՒԿԱՍ
ԳԷՈՐԳ ՃԻԶՄԷՃԵԱՆ
ԱԼԻՍ ՄԱՅԻՍԵԱՆ
ՆԵՐՍԷՍ ՄԱՐԳԱՐԵԱՆ
ՄԱՐԳՐԻՏ ՄԱՐՏԻԿԵԱՆ
ԱՐՓԻ ՄԵՐԱՍ
ՌԻԹԱ ՄՈՒՇԼՈՒԵԱՆ
ՇԱՔԷ ՄՈՒՐԱՏԵԱՆ
ՎԱՐԴՈՒՀԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ԱՐՄԷՆԱԿ ՅԱԿՈՐԵԱՆ
ՄԱՐՕ ՅԱԿՈՐԵԱՆ
ՍԵԴԱ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ
ԺԱՆԷԹ ՇԱՆԼԵԱՆ
ՔՐԻՍ ՉԱՔՄԱՃԵԱՆ
ԵՐԶԱՆԻԿ ԶԷՕՄԼԷՔՃԵԱՆ
ԱՆԴՐԱՆԻԿ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
ՊԵՐՃՈՒՀԻ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ
ԱՆԻ ԶՊՈՒՔՃԵԱՆ
ՍԻՊԻԼ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ
ՍՈՍԻ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ
ԻԶԱ ՊԱՍՄԱՃԵԱՆ
ԱԼԷՔՍԱՆ ՊԱԼԹԱՅԵԱՆ
ՆՈՐԱ ՊԱԼԹԱՅԵԱՆ
ԱԶՆԻԻ ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ
ԼԵՆԱ ՊԷՅԼԷՐԵԱՆ
ՄԱՐՏԻԿ ՊՈՒԼԿՈՒՐԵԷՄԷԶ
ՍԵԴԱ ՍԱՀԱԿԵԱՆ
ԵՐՈՒԱՆԴ ՍԵԼԵԱՆ
ԱՆԻ ՍԵՏԵՖԵԱՆ
ԱՐՐԱՀԱՄ ՍՎԱՃԵԱՆ
ՍԻԼՎԱ ՍՎԱՃԻՊԱՇԵԱՆ
ԱՇԽԷՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ
ԼԵՆԱ ՎԱՐԴԱՆԵԱՆ
ՍԻԻԶԻ ԶՈՒԼՃԵԱՆ
ԱՆԻ ՔԷՐԱՄԷԹԼԵԱՆ
ԼԻԼԻ ՔԷՐԻՄ
ԼԻԻՍԻ ՔԷՕՇԿԷՐԵԱՆ
ՇՈՒՇԱՆ ՔԷԹԷՆՃԵԱՆ
ԱՐՄԷՆ ՔԻԻՐՔՃԵԱՆ
ՍԱԼԲԻ ՔԻԻՏԵԱՆ
ԱՆԱՀԻՏ ՔԻԻՐՔՃԵԱՆ
ՍԻԼՎԱ ՔԻԻՐՔՃԵԱՆ
ՇԱՀԱՆ ՏԷՅԻՐՄԷՆՃԵԱՆ
ԿԱՐՕ ՏԷՅԻՐՄԷՆՃԵԱՆ
ՀՈՒՐԻ ՏԷՐՏԷՐԵԱՆ
ՀԱՍՄԻԿ ՏԻԼԱՆԵԱՆ
ՊԱՐԳԵԻ ԽՈՃԱՃԵԱՆ
ՄԻՍԱԿ ԳՈՄԵՏԻՍԵԱՆ

ՕԳՆԱԿԱՆՆԵՐ

ԱՌԼԻՆ ԱՔԸԼԵԱՆ
ԱԼԻԾ ԳԱՍԱՐՃԵԱՆ
ՀՈՒՐԻ ԳԱՍԱՐՃԵԱՆ
ԱՆԻ ԳՈԳՈՐԵԱՆ
ՆԱՅԻՐԻ ԵՐԷՑԵԱՆ
ՔԱՐԻՆ ԶԱՊՈՒՆԵԱՆ
ՏԻԳՐԱՆ ԶԱՊՈՒՆԵԱՆ
ՍԵԴԱ ԶՈՊԵԱՆ
ՍՕՆԱ ԹՈՎՄԱՍԵԱՆ
ՍԻԼՎԱ ԹՈՔՄԱՆԵԱՆ
ԱՍԴՐԱ ԿԻԻԼԵԱՆ
ՌՈԶՄԷՐԻ ՄԱՐՏԻԿԵԱՆ
ՀԱՅԿՈՒՀԻ ՄԱԼԷԶԵԱՆ
ԼԻԹԱ ՄԱՆԿՈՅԵԱՆ
ՍՈՆԻԱ ՄԱՆԿՈՅԵԱՆ
ԹԷՆԻ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ
ԱՐԻՍ ՇԱՀՆԱԶԱՐ
ՀԱՅԿ ՊԱՐՈՆԻԿԵԱՆ
ՄԱՐԻԱ ՌՈՄԷԼԼԻ
ԼՈՐԱ ՌԱՄԻԼԻ
ՍԻԼՎԱ ՏԷՔԻՐՄԷՆՃԵԱՆ
ԱՆՈՅՇ ՓԱՓԱԶԵԱՆ
ՍԷԴԱ ՔԷՐԻՄ
ԱԼԻՍ ՔԻԻՐՔՃԵԱՆ

ՎԱՐԳԵՐԵՍ ՊԱԼԵԱՆ
ՄԱԹԷՈՍ ՇԱՀՄԷԼԻՔԵԱՆ
ԱՐՄԱՆ ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

Մեր Մանուկները Կը Գրեն . . .

Ասկէ 25 տարիներ առաջ, խումբ մը հեռատես թորոնթոհայերու կողմէ կը հիմնուէր Ս. Սահակ-Ս. Մեսրոպ Ազգային Շարաթօրեայ վարժարանը: Գսանեակ մը աշակերտներով սկսուած այս դպրոցը այսօր կը հաշուէ աւելի քան 250 հոգի, մանկապարտէզէն մինչեւ ութերորդ դասարան: Հոն մեր տղոց կը ջամբուի հայեցի դաստիարակութիւն, վառ կը պահուի անոնց մատղաշ հոգիներուն մէջ հայ լեզուի եւ մշակոյթի սէրը, հաղորդակից կը դառնան հայ գրական ու պատմական արժէքներու, որպէսզի անոնք իրենք գիրքնէ գիրքնէ հպարտ գգամ իրենց անցեալով եւ ներկայով:

Ընդունուած իրողութիւն է, որ լեզուն ամէնէն հարագատ եւ ազդու միջոցն է հայ մանուկին հայկականութիւն փոխանցելու, գայն հայութեամբ թրծելու: Սակայն, աշակերտին միշտ գրել եւ խօսիլ սորվեցնելը հիմնական պայման ընդունելով հանդերձ, պէտք է անոր ընդունակութեանց ճամբով գայն դնել այնպիսի մթնոլորտի մը մէջ, ուր ան ինքզինք կարենայ դրսեւորել եւ ստեղծագործել:

Ստորեւ, կարգ մը յապաւումներով տրուած պատառիկները հաստատելով հանդերձ վերելի մատնանշումը, կ'արտայայտեն հայ դպրոցին, հայ ուսուցիչին, հայ գրողին հանդէպ նորահաս մեր սերունդին անմեղ զգացումները:

ԽՄԲ.

...Երեք տարիներ առաջ, երբ ընտանեօք Հայաստան գացինք, Հայրենիքի հայերը զարմանքով եւ հիացումով հետեւեցան իմ հայերէն խօսակցութեանս: Ու ես մեծ հպարտութեամբ պատասխանեցի իրենց, որ թէպէտեւ Գանատայ ծնած եմ բայց հայ դաստիարակութիւն ստացած՝ ու հայկական ոգիով մեծցած եմ:

Որքան ցաւալի է այն հայուն, որ հայ է եւ իր մայրենի լեզուն չի գիտեր:

ԱՐԻ ԳԸԼԸՃՅԱՆ

...Շարաթ առտու կանուխ շուտով պատրաստուեցայ եւ հօրս ձեռքէն բռնած ուրախութեամբ մտանք դպրոց: Յանկարծ զանգը հնչեց: Աշակերտները խումբ-խումբ շարքի կեցան: Ես շուարած մնացի մէջտեղ: Յուսախափութիւնս հազիւ լացի կը սկսէր փոխուիլ, երբ հրեշտակատիպ, փպտերես, ալեհեր մագերով տիկին մը քովս եկաւ եւ իր փափուկ ձեռքերով բռնեց ձեռքէս ու զիս տարաւ իմ դասընկերներուս մօտ: Ան իմ առաջին ուսուցիչս եղաւ. Տիկին Աղաւնի Գարակէօզեանը:

Ես սիրեցի Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Ազգային Վարժարանս: Պիտի սիրեմ ապագային ալ եւ պիտի ջանամ օգտակար ըլլալ անոր իմ կարողութեանս սահմանին մէջ: Այն ատեն լաւագոյնս հատուցանած պիտի ըլլամ ուսուցիչներուս մեզի ջամբած հայերէնի գիտութիւնը:

ՎԱԶԳԷՆ ԽԱՊԱՅԵԱՆ

...Այսօր հրաժեշտի այս ուրախ՝ սակայն նոյնքան տրտում պահուն մտքէս ժպտաւէնի պէս կը տողանցեն՝ տարիներու յիշատակները: Կը յիշեմ թէ ինչպէս առաջին անգամ հօրս ձեռքը բռնած, միւս ձեռքս ալ Այբբենարանս, դպրոցի դռնէն ներս մտայ: Քիչ մը շուարած, քիչ մը վախցած, բոլորովին անծանօթ շրջանակի մը մէջ, մինչեւ որ լսեցի հայերէն լեզուն, իմ լեզուն: Զարմանքով տեսայ, թէ բոլոր աշակերտներն ալ հայ են, բոլոր ուսուցիչները՝ նոյնպէս հայ: Կը յիշեմ ուսուցչուհին առաջին անգամ գրատախտակին վրայ գրեց հայերէն Այբուբենի անհատնում տառերը: Որքան ատեն որ ինք կը գրէր ու ես կը դիտէի, ամէն ինչ լաւ էր. բայց երբ կարգը եկաւ սորվելու՝ զգացի թէ ինչ տանջալից աշխատանք մը կը սպասէր ինծի: Աշխատեցայ սակայն, երբեմն տրտունջով, երբեմն մրցակցութեան ոգիով, եւ յաճախ ալ մեծ ուրախութեամբ ու գոհունակութեամբ:

Որքան արագ սահեցան տարիները, ու ահաւասիկ հրաժեշտի պահը հասած է: Յուզումով եւ անմոռանալի ու անոյշ յիշատակներով կը բաժնուիմ իմ սիրելի դպրոցէս՝ ուր ստացայ հայեցի դաստիարակութիւն եւ ծանօթացայ իմ ազգի մշակոյթին ու պատմութեան:

ԹԷՆԻ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

...Որպէս ութերորդ դասարանի խելահաս աշակերտուհի, այս տարի անդրադարձայ որ մեր ուսուցիչները որքան ժամանակ, աշխատանք եւ շունչ սպառեցին մեր վրայ եւ աշխատեցան մեր շաբաթօրեայ դպրոցը եւ դասաւանդուած դասերը հաճելի դարձնել մեզի:

Կեցցէ՛ մեր Սուրբ Սահակ եւ Սուրբ Մեսրոպ Ազգային Շաբաթօրեայ վարժարանը: Կեցցե՛ն մեր ուսուցիչներն ու Տնօրէնութիւնը:

ՄԱՐԱԼ ԻՇԽԱՆԵԱՆ

...Մտողքիս երախտագէտ արտայայտութիւնը դպրոցիս եւ ուսուցիչներուս հանդէպ, ինծի ալ խորհիլ տուաւ որ երկուստեք ինչքան մեծ գոհողութիւններ կ'ըլլան մեր հայեցի դաստիարակութեան նկատմամբ եւ ինչքան քիչ կը գնահատուին անոնք:

Պէտք է խոստովանիմ, որ շատ թերի գտնուած եմ հայերէն խօսելու եւ յաճախ յանդիմանուած ատոր համար: Սակայն այսօր մինչ մեր վկայականները կը ստանանք, յարգելի ուսուցիչներուս երախտագիտութիւնս յայտնել կ'ուզեմ հետեւեալ խոստումովս: Ասկէ ետք որոշած եմ բոլոր հայերուն հետ միշտ հայերէն խօսիլ եւ բնաւ չմոռնալ Խաչատուր Աբովեանի սա խօսքը. - Ա՛խ ԼԵԶՈՒՆ, ԼԵԶՈՒՆ, ԼԵԶՈՒՆ ՈՐ ԶԸԼԼԱՅ ՄԱՐԴ ԻՆՉ ԲԱՆԻ ԿԸ ՆՄԱՆԻ. ԱԶԳԸ ՊԱՀՈՂԸ, ԻՐԱՐ ՄԻԱՑՆՈՂԸ ԼԵԶՈՒՆ Է...:

ՀՐԱՅՐ ՍԱՂԸՐԵԱՆ

...Թէեւ բաժանման տարիները մօտեցան եւ գալ տարի պիտի աւարտեմ վարժարանս, կը խոստանամ այն ինչ որ ստացայ վարժարանէս տալ իմ յաջորդներուս, եւ աշխատիլ ու ծառայել հայ շրջանակներէն ներս:

Իսկ դուք սիրելի ընկեր-ընկերուհիներ, այս տարի որ կ'աւարտէք ու կը հեռանաք այս մանկական սիրուն վայրէն, մեր աննման կրթական օճախէն, կը մաղթեմք որ այն ջահերը զոր վառեցան ձեր սրտերուն՝ մէջ, միշտ յաւերժ ու անմար մնան:

Պահեցէ՛ք զայն, ու աւելին՝ փոխանցեցէ՛ք ձեր յաջորդներուն:

ՌԱՖԻԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ

...Ուրեմն գիտակցիմք մեր լեզուի գեղեցկութեան: Անիկա միայն միջոց մը չէ մեր գաղափարներն ու զգացումները արտայայտելու: Անոր մէջ մեր դարաւոր հայ ժողովուրդի ոգին կայ: Հոն կը բաբախեն Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի սիրտերը:

Թող միշտ մեր ականջներուն մէջ հնչեն մեր հայերէնի դասի Սարմէնի հետեւեալ աննման խօսքերը. -

Հայոց գաւակներ, Ձեզ եմ դիմում սրտագին
Պահպանեցէ՛ք դուք մեր լեզուն հայկական,
Նա մեր շունչն է, մեր արեւն է, մեր հոգին,
Նրա մէջ եմ մեր այսօրն ու ապագան:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆԵԱՆ

...Տարիները շուտով սահեցան: Ամէն տարի առաջինէն քիչ մը աւելին սորվեցայ: Իմ աննման ուսուցիչ-ուսուցչուհիներս իմ մէջս արթնցուցին ընթերցումի փափաք ու սէր: Իւրաքանչիւր դասս ինծի համար եղաւ վայելքի պահ մը ու ես ճանցցայ մեր անմահ բանաստեղծներուն կեանքն ու գործը: Իսկ Հայոց պատմութեան դասերով ես սորվեցայ հերոսանալ եւ հպարտանալ մեր անցեալի փառքերով ու ներկայի եւ ապագայի նորանոր նուաճումներով:

Կ'ուզեմ ու կը խոստանամ, ուր որ ալ գտնուիմ, ինչ որ ալ ընեմ, միշտ առկայծ պահել սրտիս մէջ ԿԱԹՒԼ ՄԸ ԻՒՂ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԷՆ գոր ստացայ Հայերէնի մէկ դասէս, կաթիլ մը իւր որ հատնում պիտի չունենայ եւ ստուեր պիտի չձգէ իմ պայծառ հայու հպարտ դէմքիս:

ԹԱԼԻՆ ՄԱՐՏԻԿԵԱՆ

...Երբ ես վեցերորդ դասարան էի Ս. Սահակ-Ս. Մեսրոպ Ազգ. Շաբաթօրեայ Վարժարանին մէջ, հայու հպարտութիւնս արթնցաւ մէջս եւ սկսայ աւելի սիրել իմ հարազատ լեզուս:

ԼԻԼԻ ԹՈՍՈՒՆԵԱՆ

...Մենք մեզ հայ ենք կոչում որովհետեւ մենք հպարտ ենք մեր լեզուով եւ սէր ունենք Հայաստանին: Հազար տարի պիտի ապրենք եւ պիտի ցոյց տանք այս աշխարհին մեր հայ լինելը:

Պիտի պահեմ իմ մայրենի լեզուս իր գեղեցկութեան համար, Սեւանին համար եւ մայր բնութեան համար:

ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ

...Հայկական վարժարանիս ընկեր-ընկերուհիներս տարբեր հմայք մը ունէին: Յաջորդաբար տասը տարիներ, միասին սերտեցինք, միասին խաղացինք, հանդէսներ կատարեցինք եւ հայկական երգեր երգեցինք: Կ'ընդունիմ որ երբեմն շաբաթ օրերը կը դժկամակէի դպրոց երթալու, նկատի առնելով որ իմ օտար ընկերուհիներս ազատ էին եւ իրենց շաբաթ առաւօտեան տաքուկ անկողիններուն մէջ: Սակայն հիմա կը հասկնամ թէ ծնողքս շիտակ էին զիս հայկական դպրոց ղրկելով:

Անոնք ալ իրենց գոհողութեան բաժինը բերին իմ հետս առտու կանուկ արթննալով, իմ դասերուս օգնելով, եւ նոյնիսկ ցուրտին բուքին զիս դպրոց հասցնելով:

Իսկ գալով իմ ուսուցիչներուս, անոնք կազմեցին դպրոցին ողնահարը: Եղան օգտակար ու կարեկցող մեզի հանդէպ: Համբերող ու գիտակից մեր հայերէն լեզուի տկարութեան, ու քաջալեր՝ մեր հետաքրքրութեանց, որոնք արժանի են ամէն գնահատանքի ու յարգանքի:

Շնորհակալութիւն ձեզի մեր անխոնջ մշակներ, որ անցնող այս տասը տարիներու ընթացքին դուք ձեր լաւագոյնը տուիք մեզի որ արժանի հայորդիներ մեծնանք ու մնանք: Ձեր յիշատակը միշտ վառ պիտի մնայ մեր սրտերուն մէջ:

ՅԱՍՄԻԿ ՂԱԶԱՐԵԱՆ

...Թորոնթոյի Ս. Սահակ ու Ս. Մեսրոպ Շաբաթօրեայ Վարժարանը ինծի միայն Ա.Բ.Գ-ը չսորվեցուց, այլ իմ մէջս զօրացուց իբր Հայ՝ շարունակել սորվիլ մեր մայրենի լեզուն, մեր գրականութիւնն ու մշակոյթը, նախ մայր հայրենիքին մէջ ապա այստեղ, ինքնաշխատութեամբ:

Շատ երախտապարտ եմ այսօր որ մաս կը կազմեմ Ս. Սահակ ու Ս. Մեսրոպ Ազգային Վարժարանի ուսուցչական կազմին ու կը յուսամ թէ այդ նուիրումը ու սէրը որ կը զգամ մեր ազգին, մշակոյթին ու լեզուին հանդէպ, պիտ կարենամ փոխանցել իմ աշակերտներուս:

ԻԶԱ ՊԱՄՄԱՃԵԱՆ

ՎԱՐՃԱՐԱՆԻՍ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ



ձախէն – աջ

Պր. Զ. Գաֆէսեան, Պր. Ն. Մաննըլիքեան, Տիկ. Ա. Եազընեան, Պր. Ճ. Շանլեան (Ատենապետ)
Տիկ. Ա. Էօտէմիշլեան, Պր. Գ. Թոզաք, Պր. Ա. Մուշլուեան:

ՈՒՍՈՒՅԶԱԿԱՆ ԿԱԶՄԸ



նստած ձախէն – աջ

Պր. Հ. Թորոսեան, Տիկ. Ն. Պալթայեան, Տիկ. Ս. Նիկողոսեան, Տիկ. Ա. Գանտահարեան –
(Տնօրէնուհի) Տիկ. Ժ. Շանլեան, Տիկ. Մ. Կարազեան, Պր. Ա. Զիլինկիրեան,
ռոսքի՝ Օր. Թ. Նիկողոսեան, Տիկ. Ա. Երէցեան, Տիկ. Լ. Պէյլէրեան, Տիկ. Ս. Իգնոյեան,
Տիկ. Ս. Պալապանեան, Տիկ. Վ. Գաբրիէլեան, Տիկ. Ս. Սահակեան, Օր. Մ. Ժամկոչեան,
Օր. Ի. Պասմանեան, Օր. Ն. Երէցեան:



Ը. Կարգ
Գաստիարակ՝
Տիկ. Վանեթ Շանկևան



Ը. Կարգ
Գաստիարակ՝
Տիկ. Սեդա Նիկոսյան



Զ. Կարգ
Գաստիարակ՝
Տիկ. Սեդա սահակյան




Ե. Կարգ
Դաստիարակ՝
Պր. Անդրանիկ Զիլինկիրեան



Գ. Կարգ
Դաստիարակ՝
Պր. Հայկա Թորոսեան



Գ. Կարգ
Դաստիարակ՝
Տիկ. Մարգրիտ Կարագեան



Բ. Կարգ
Գաստիարակ՝
Տիկ. Վերժին Գաբրիելյան



Բ. Կարգ
Գաստիարակ՝
Տիկ. Առի Պալազանյան



Ա. Կարգ
Գաստիարակ՝
Տիկ. Սիրվա Իգնոյեան



Յատուկ Դասարան՝ Օր. Իգա Պասմանեան



Վարժարանիս Քարտուղար Պր. Արշամ Գըլընեան



ՄԵՐ ԿԵՆՆԻՔՆ





ՄԵՐ ՀԱՆԴԻՍՆԵՐԷՆ















Օրհնութեամբ

Վրացիներ
2 Կ 1968

Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՇԱՐԱՆ







ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ



**Ժանէթ Շանլեան, Անդրանիկ Զիլինկիրեան,
Արշալոյս Գանտահարեան, Սեդա Նիկողոսեան:**

Cover Logo by: S. Kudian

Հրատարակութիւն՝ Տպարան Սեւան, Ա. Պ. Լուսարարեան – Թոյրոնթօ 49 2-1 85 3